Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 205-Ա ԵՎ 206-Ա, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 207-Ա-209-Ա, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 210-Ա-212-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 205-Ա որոշումը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին: Որոշման նախաբանում հղում է կատարվել ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 73-Ն որոշման 5-րդ կետին, համաձայն որի համայնքի ղեկավարին իրավունք է վերապահված համայնքի բյուջեում ոչ թե փոփոխություններ, այլ մինչև 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ կատարել: Ուստի որոշման վերնագիրը պետք է շարադրել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» խմբագրությամբ, իսկ որոշման մեջ «բյուջեի հոդվածներում կատարել հետևյալ» բառերից հետո գրառված «փոփոխությունները» բառը փոխարինել «վերաբաշխումները» բառով, այնուհետև կատարել ոչ թե փոփոխություններ, այլ վերաբաշխումներ:

Որոշումը չի համապատասխանում նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին՝ այն է համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ վերը նշված օրենքով սահմանված հավասարակշռությունը: Սակայն ըստ համայնքի ղեկավարի որոշման այն խախտվել է և չեն պահպանվել ավելացման և պակասեցման չափաքանակները: Անհրաժեշտ է ավելացման և կամ պակասեցման չափաքանակները համապատասխանեցնել, պահպանելով համայնքի բյուջեի հավասարակշռվածությունը:

Թիվ 206-Ա , 207-Ա 208-Ա 209-Ա որոշումների 3-րդ կետերն ավելորդ են:

Թիվ 210-Ա, 211-Ա և 212-Ա որոշումների նախաբաններում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետին կատարված հղումը սխալ է: Բացի այդ, որոշումների նախաբաններում «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ մասի դրույթներով և հիմք» բառերից հետո անհրաժեշտ է գրառել «ընդունելով» բառը:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
18.02.2020թ.